

ՌԱԿՆԵՂՈՒՄԵՒ ԲԱՏԻՕ ՍԵՒՄՆ-ը

Լիբանանի բոլոր շրջաններում մեջ, հետևեալ ալիքներում վրայ

- * Լիբանանի եւ Սուրիոյ ծովեզերեայ շրջաններում, Լեռնալիբանանի, Պեջասայի, Սայտայի եւ Թրիփոլի մեջ՝ 101.5 FM ալիքին վրայ:
- * Հիւսիսային Լիբանանի մնացեալ շրջաններում մեջ 101.3 FM ալիքին վրայ:
- * Պեյրոսի եւ Լեռնալիբանանի մեջ նաեւ՝ 90.8 FM ալիքին վրայ:

Ֆեռ.՝ 01-567161-2-3 Fax: 01-567168

* Cablevision 11700 GHz digital. * Կայքէջ: www.radiosevan.com

ՆԱԽԱԳԱՅ ԱԸԼԵՅՄԱՆ՝ ԻՐԱԶԵԿ ԱՇԽԱՏԱԻՐՆԵՐՈՒՆ ԴԺՈՒՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Հանրապետութեան նախագահ Միշել Սըլէյման շնորհաւորեց լիբանանցի աշխատաւորները իրենց տօնին առիթով, նշելով որ Աշխատաւորութեան Օրը՝ անհրաժեշտ բարեկարգութիւններ կատարելու համոզմունքի խորհրդանշիչ պարտի ծանայել բոլոր լիբանանցիներուն:

Նախագահը նաեւ նշեց, թէ իրագրել էր աշխատաւոր դասակարգին դիմագրաւած դժուարութիւններուն, շեշտելով, որ ինք՝ կառավարութեան հետ համագործակցաբար իր կարելին կը կատարէր մեղմացնելու համար աշխատաւորներուն դիմագրաւած դժուարութիւնները:

Աշխատաւորութեան Օրուան առիթով արտասանած իր խօսքին մէջ, Ելեմտական նախնիներ Միշել Սըլէյմանը նշեց, թէ Լիբանան կը գտնուի համաշխարհային ելեմտական փոթորիկին առջեւ, որովհետեւ՝ շրջանային բոլոր պետութիւնները սկսած են կրել ելեմտական ցնցումին հետեւանքները:

Նախարարը յայտնեց, թէ մեծ թիւով լիբանանցի գործազուրկներ պիտի վերադառնան իրենց հայրենիքը: Անոնք աշխատանք պիտի փնտռեն, սակայն աշխատանքի տեղերը սահմանափակ ըլլալով՝ անոնք որոշ դժուարութիւններ պիտի դիմագրաւեն:

Ազուտոր շեշտեց տնտեսական յստակ քաղաքականութեան մը անհրաժեշտութիւնը, որուն համար՝ «քաղաքական ու ապահովական կայունութիւնը նախապայման է», ըսաւ ան:

ՆԱՍՐԱԼԼԱ ԿԸ ՄԵՐԺԷ ԲԱԳԱՔԱԿԱՆԱՅՆՆԵԼ ՍՊԱՆԵՐՈՒՆ ԱՉՍ ԱՐՁԱԿՈՒՄԸ

Հեռատեսիլէն սփռուած էլոյթի մը ընթացքին, Հրճապալայի ընդհանուր քարտուղար Սեյիտ Հասան Նասրալլա բացառեց չորս սպանները ազատ արձակելու որոշումը ընտրական նպատակներու համար շահարկելու հնարաւորութիւն մը:

Ան ըսաւ, որ միջազգային ատենակալ այսօրուան դրութեամբ, Ռաֆիք Հարիրիի սպանութեան համար չունի որեւէ ամբաստանեալ: Սակայն, ան համագործակցութեան կոչ ուղղեց Ռաֆիք Հարիրիի ընտանիքը սիրողներուն եւ կոչ ուղղեց բոլոր լիբանանցիներուն միասնաբար աշխատելու, գործակցելու եւ յայտնաբերելու ոճրիկն հեղինակներն ու յանցագործները:

Նասրալլա դիտել տուաւ, որ Եգիպտոսի հետ ներկայի մագըղցումը միակողմանի քարոզչական պատերազմ մըն է պարզապէս: Ան իր էլոյթը ավարտեց յայտնելով, թէ Հրճապալայի դէմ Ռաշիսկընի արշաւին պատճառը այն է, որ Հրճապալա կը մերժէ ճանչնալ Իսրայէլը եւ ընդունիլ՝ ամերիկեան տիրապետութիւնը:

ԲԱՍԵՉԻ ՊԻՏԻ ԱՅՑԵԼԷ ԼԻԲԱՆԱՆ

Լիբանանի համար ստեղծուած միջազգային դատական ատենանի նախագահ Անթոնի Քասեպի, Մայիս 11-ին, այցելութիւն մը պիտի կատարէ Լիբանան:

Քասեպի հանդիպումներ պիտի ունենայ հանրապետութեան նախագահին, վարչապետին, խորհրդարանի նախագահին, գերագոյն ատենանի խորհուրդի նախագահ Անիվա Անըմի եւ արդարութեան նախարար Իպրահիմ Նաժժարի հետ:

Գերագոյն ատենանի խորհուրդի նախագահ, դատաւոր Անիվա Անըմ, ատենանի խորհուրդի բոլոր անդամները հրաւիրեց նիստի մը՝ Երեքշաբթի յետմիջօրէին:

Գերագոյն ատենանի խորհուրդը պիտի քննարկէ չորս սպաններու ազատ արձակուելու լոյսին տակ, Լիբանանի իրաւական կառուցումներուն հասցէին կատարուած քննադատութիւնները, ինչպէս նաեւ՝ անոնց դէմ առնուելիք քայլամիջոցները:

ԺԱՄԺԱ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԷ

Լիբանանեան Ուժերու գործադիր խորհուրդի նախագահ Սամիր Շաւաթ լրագրողներուն հետ ունեցած իր հարցազրոյցին ընթացքին ըսաւ, թէ Մարտ 8-ի Ուժերուն քաղաքական ծրագիրը անելի յստակացաւ չորս սպաններուն ազատ արձակումէն ետք: Շաւաթ վերջիջեցուց, միջազգային դատական ատենանի կազմութիւնը խանգարելու ընդդիմութեան կատարած արարքները:

Ան դիտել տուաւ, որ միջազգային դատական ատենան էր չորս սպաններուն դէմ ձեռնարկութեան վճիռ արձակողը եւ ոչ՝ լիբանանեան ատենան:

«ԽՈՉԱԿՐԻՓ»Ը ՕԺՏՈՒԵՑԱՒ ՆՈՐ ԱՆՈՒՆՈՎ ՄԸ

Առողջապահութեան նախարարութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, ուր բացատրելով հանդերձ Լիբանանի մէջ «Խոչակրիփ»ի H1N1 ժահրի գոյութիւնը, զգոմութեան կոչ ուղղեց քաղաքացիներուն:

Իսրայէլի մէջ, առողջապահութեան նախարարութիւնը հրահանգեց փակել վարժարան մը, աշակերտուողի մը H1N1 ժահրով վարակուած ըլլալուն պատճառաւ: Մեքսիքոյի մէջ երկ կայանաբերուեցան «խոչակրիփ»ի 40 նոր դէպքեր:

Առողջապահութեան Համաշխարհային կազմակերպութիւնը հրապարակեց «Խոչակրիփ» անուանումէն, որովհետեւ անիկա բիրիմացութեան դուր կը բանայ: Գիտնականներուն կարծիքով՝ խոչի միսին օգտագործումը չի կրնար համաճարակի վարակման պատճառ հանդիսանալ, որովհետեւ այդ համաճարակը կը փոխանցուի օդային ճանապարհով: Վարակը պայտօնապէս ստացաւ A (H1N1) անուանումը:

ԸՍՏ ՈՒՄՈՒՆԿԹԵՆԻ

ՀԸՂՊԱԼԱ ԱՄԵՆԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԱԶԱՐԵԿՉԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆ Է

Համաշխարհային ահաբեկչութեան մասին պատրաստած իր տարեկան տեղեկագիրին մէջ, Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութիւնը Հրճապալան կը դասէ իբրեւ աշխարհի ամենակատարելագործուած ահաբեկչական կազմակերպութիւնը:

Տեղեկագիրը կը նշէ, թէ բիրուն կայունութիւն մը կը տիրէ Լիբանանի մէջ գտնուող պաղեստինեան գաղթականներուն մէջ: Իսկ Իրանի մասին անդրադառնալով, տեղեկագիրը կ'ըսէ, թէ Թեհրան դարձած է ահաբեկչական կազմակերպութիւններու օժանդակող աշխարհի առաջին պետութիւնը:

ՄԱՐՏ 14-Ի ԵՒ ՄԱՐՏ 8-Ի ՈՒՇԵՐԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՑԻՆ ԱԼԷՅԻ ԸՆՏՐԱՅԱՆԿԸ

Ուրբաթ յետմիջօրէին, հանդիսաւոր արարողութեան մը ընթացքին, Մարտ 14-ի Ուժերը յայտարարեցին Ալեյի ընտրաշրջանի ընտրացանկը:

Մարտ 14-ի ընտրացանկը կ'ընդգրկէ Ֆուատ Սաստի, Հենրի Հըրուի, Աբրամ Շըիպայի եւ Ֆեյտի Հապրի անունները:

Մարտականութեան եւ Երիտասարդական հարցերու նախարար Թալալ Արպան Ուրբաթ յետմիջօրէին յայտարարեց Ալեյի ընտրաշրջանին մէջ ընդդիմութեան ընտրացանկը:

Ընտրացանկին մաս կը կազմեն՝ Սեգար Ապու Խալիլ, Աթուան Ալ Չըղպի եւ Մարուան Ապու Ֆատէլ:

ՀԱՐՊ ԿԸ ՓԱՓԱՔԻ ԻՄԱՆԱԸ ՄԱՐՏ 8-Ի ՈՒՇԵՐՈՒՆ ԾՐԱԳԻՐԸ

Երեսփոխան Պուրոս Հարպ ընդունեց «Փոփոխութեան Ծարժում» կուսակցութեան նախագահ Էյի Մահֆուարը:

Հանդիպումէն ետք, լրագրողներուն հետ ունեցած իր կարճ գրոյցին ընթացքին, Հարպ հարցցուց, թէ Լիբանանի ժողովուրդը կ'ուզէ յստակօրէն գիտնալ Մարտ 8-ի Ուժերուն յաջողի հանգրուանի ծրագիրը:

Հարպ ըսաւ, որ իրաւապահ մարմիններու եւ արդարադատութեան կառուցումներուն վրայ յարձակումը՝ յեղաշրջումի փորձ մըն է ընդդիմութեան կողմէ:

ՏԱԹՅԱԹԻ ԽՈՐՀՈՒՐԸ՝ ԶՈՐՍ ՄՊԱՆԵՐՈՒՆ

Երեսփոխան Ահմետ Ֆաթ-Ֆաթի կարծիքով, չորս սպանները ազատ արձակելու որոշումը պատիւ մըն է միջազգային դատական ատենանի եւ Մարտ 14-ի Ուժերուն համար, որովհետեւ Մարտ 14-ի Ուժերը առաջին իսկ օրէն կ'երաշխարհէին, թէ ապաքաղաքական կառուցումը մըն է միջազգային ատենանը, սակայն ընդդիմութիւնը հաւաստեց չընձայել:

Ֆաթֆաթ ատեցուց, որ ազատ արձակուած սպանները խորհրդին մէջ ընդդիմութիւնը պետք է, որ հարցաքննութեան հրահրէին, որովհետեւ ընդդիմութիւնն էր միջազգային դատական ատենանի կազմութիւնը ու շահագործողը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՑ ԼՈՒՐԵՐ

Ռաս Պեյրոսի մէջ գործող, Հրճալայ ռազմականատան պատասխանատուներուն տուեալներով, ապահովական ուժեր, վերջին օրերուն ընթացքին, իրենց կատարած հետապնդումներուն եւ ձեռնարկութիւններուն հետեւանքով գրաւած են ութը միլիոն տուար արժողութեամբ թմրանիւթեր:

Երկրի տարբեր շրջաններուն մէջ կատարուած հետաքննութիւններու հետեւանքով, ներքին ապահովութեան ուժեր ձեռնարկելու օրէքէ խոյս տուած 50 անձեր:

Պեյրոսի Առաջին ընտրաշրջանի Հայ Կաթողիկէ համայնքի աթոռին թեկնածու Ռիշար Գույումեան յայտարարեց, թէ իր թեկնածուութիւնը յետո կ'ընտրուի պարագային, ան թիկունք պիտի կենայ Մեթր Սեթ Թուրսարգիսեանի թեկնածութեան:

Մուսթաքալ Հոսանքի նախագահ Սաստ Հարիրի, Ղըրէյթի մէջ ընդունեց երեսփոխաններ Իսամ Արաժի, Մահմուտ Մըրատը, Իզամ Տանտաշին, Աբարի մէջ Ալուալի համայնքին պատմական աթոռին թեկնածու Հէյսեմ Հըմտէնը, ինչպէս նաեւ կարգ մը քաղաքապետութիւններու նախագահներ:

Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութեան միջինարեւելեան հարցերու նախնի օգնական՝ Տէյվիտ Ուելզի կարծիքով, խորհրդարանական ընտրութիւններու ընտրապայքարը պիտի սահմանափակուի միայն կարգ մը Զրիստոնէական շրջաններու մէջ, բայց յատկապէս՝ Պեյրոսի, Չահլէի, Մթընի եւ Զուրայի ընտրաշրջաններուն մէջ:

ՆԱԽԱԳԱՅ ԱՐԳԱՍԵԱՆ ՈՐԵՐԶ ՄԸ ՅՂԵՑ ՄԱՅԻՍ 1-Ի ԱՌԻԹՈՎ

Մայիս 1-ի տօնին առիթով Հայաստանի նախագահ Սեթ Սարգսեան շնորհաւորական ուղերձ մը յղեց Հայաստանի աշխատաւորներուն, անոնց մարտնչելով խաղաղ ու ստեղծագործ աշխատանք՝ յանուն անոնց ընտանիքներուն բարեկեցութեան եւ հայրենիքի բարգաւաճման:

ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ԴՐԱԿԱՆ ՏԱՐԵՐ ԿԸ ՏԵՄՆԷ

Երեսանի Մատենադարանին մօտ Մայիս 1-ին տեղի ունեցաւ Հայ Ազգային Գոնկրէսի հանրահաւաքը: Հակառակ այն իրողութեան, որ ոստիկանութիւնը փակած էր դէպի Մատենադարան տար:



Մոտ ճամբաները, հանրահաւաքէն ետք տեղի ունեցաւ Գոնկրէսին կազմակերպած քայլաշարք, որ տպատիքի ըլլալուն գուցեւ բազմամարդ էր: Քայլաշարքին մասնակիցները վանկարկեցին համա-ժողովրդական շարժման կարգախօսները: Հանրահաւաքին ընթացքին էլ յղեց Հայ Ազգային Գոնկրէսի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան: Ան կեղդոնացաւ հետեւեալ չորս կէտերուն վրայ:

- Ա-Ընկերային տնտեսական իրավիճակը:
 - Բ-Քաղաքական բանադրականներուն հարցը:
 - Գ-Հայ-Թրքական երկխօսութիւնը:
 - Դ-Երեսանի քաղաքապետարանի ընտրութիւնները:
- Տէր Պետրոսեան ըսաւ, թէ ինք դրական տարրեր կը տեսնէ Հայ-թրքական յարաբերութիւններուն միջ, սակայն դէմ է Տեղապալանութեան համար պատճառներու յանձնախումբի մը կազմութեան:

ԱՊՊԱՍ ՄՏԱԳԻՐ Է ԿԱԶՄԵԼՈՒ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ապպասի որոշումը: Երկ կտօսին, պաղեստին-Ռաշիսկըն, Հարաւային ճանքեր կիւթական վնասներ: Ան ի հակադարձութիւն՝ խոչընդոտելու, Հարաւային F-16 օդանաւեր ան-



Կազայէն, իրթիւ մը արձակելու օրէքէ քաղաքական սահմաններուն միացնող շրջան մը:

ԻՍՐԱԵԼ ՄԻԱԿ ԽՈՉԸՆԴՈՏՆ Է ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՌՁԵՒ

Սուրիոյ նախագահ Պաշ-Հար Ասատի քաղաքական եւ տնտեսական հարցերու խորհրդական Պուսէյնա Շաւաթը, թէ ամբողջական եւ արդար խաղաղութեան համար Սուրիոյ պատրաստակամութիւնը իր դրական ներազդեցութիւնը պիտի ունենայ Համասի, Հրճապալայի եւ Իրանի գործողութիւններուն վրայ:

Շաւաթը դիտել տուաւ, որ Իսրայէլ մայրու կերպով խոյս կու տայ խաղաղութեան ընտրանքներ եւ Իսրայէլ է Միջին Արեւելքի մէջ ամբողջական խաղաղութեան առջեւ կեցող պիտի ըլլայ Դամասկոս: